

Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը տեղեկացնում է

Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ սկսում է “Pre-Accelerator” ծրագիրը, որն ուղղված է ձեռներեցության զարգացմանը հատկապես Գեղարքունիքում, Վայոց ձորում, Կոտայքում, Սյունիքում, Տավուշում և այլ մարզերում:

Ծրագիրը թիրախավորում է հետևյալ խմբերին՝

- Ձեռնարկատեր կանանց
- 18-25 տարեկան երիտասարդ ձեռներեցներին, ովքեր ապրում են Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի և այլ մարզերում:

Pre-Accelerator-ի բաղկացուցիչներն են՝

- Բիզնես ուղղվածություն. գաղափարի ամրապնդումից մինչև ներդրումների ներգրավում, վաճառքի ուղղություններից մինչև իրավաբանական մոդելներ,
- Տեխնոլոգիական ուղղվածություն. անդրադառնալով տեխնոլոգիաների կիրառմանը ոչ տեխնոլոգիական ընկերություններում՝ ուսումնասիրելով 0-code օնլայն վաճառքի կայքերի պատրաստում, թվայնացում, ավտոմատացում, ղեկավարման համակարգերի ներդրում և այլ գործիքներ,

• Մենթորների հետ հանդիպումներ. շաբաթական հանդիպումներ ձեզ կցված բիզնես խորհրդատուների հետ, որոնցից յուրաքանչյուրն ունի համապատասխան գաղափարի ոլորտում երկարամյա փորձ:

• Ծրագիրը ներառում է հիմնականում հետևյալ ոլորտները՝

- Գյուղատնտեսություն
- Սննդի վերամշակում
- Հյուրընկալություն
- Առևտուր
- Առողջապահական ծառայություններ
- Տեքստիլ

Դասընթացները տեղի են ունենալու օնլայն տարբերակով, իսկ որոշ միջոցառումներ տեղի են ունենալու ֆիզիկապես՝ մարզերում: Ծրագրին դիմելու վերջնաժամկետը հոկտեմբերի 24-ն է: Ցանկացողները կարող են դիմել:

Գրանցվելու համար՝

Կանայք, ովքեր ունեն գաղափար/գործող բիզնես՝

<https://forms.gle/gQ6ZBJGnzDhR5y9WA>

Երիտասարդներ՝ <https://forms.gle/KhnLjjsjnN3opGLd7>

«ԻԼՏԿ» հիմնադրամի տնօրինություն